

ԱՆԷԾՔ*

— 2 —

ՍԻԳՈՒԱՅԻՈՅ Երկրին Տյէրտեօ-Սէնդ-Միգլօշ (Ճուրնով) քաղաքը, ասկէ 62 տարի առաջ, ազգային ժողովրդապետին պաշտօնարանին դուռը կը զարնուի.

— Բաց, կը կանչէ ներսէն ժողովրդապետը, գրիչը վար դնելով գրասեղանին վրայ:

Բարձրահասակ մարդ մը 40—50 տարեկան՝ ներս կը մտնայ, երեսին գոյնը նետած, և որտին տազնապը կապոյտ աչքերուն վրայ անդրադարձած, — յարգութեամբ բարեւ սալով ժողովրդապետին, տխուր զգացմամբ խօսիլ սկսաւ.

— Ներեցէք համարձակութեանս, մեծարգոյ Տէր, որ ամենակարեւոր գործոյ համար ձեր հայրական խնամոցը ստիպուած եմ դիմել. օգնեցէք թշուառիս և ազատեցէք զիս յուսահատ վշտերէս:

Այս խօսքերը ըսելու ժամանակ՝ աչքերը ուղղակի քահանային վրայ տընկած, յուզեալ սրտին մխիթարութիւնը անկէջ կը յուսար:

Ժողովրդապետը աթոռ հրամցնելով օտարականին, պատասխանեց իրեն.

— Ես ամէն ժամանակ, ձեռքէս եկած օգնութիւնը պատրաստ եմ ընել, մանաւանդ երբ ընկերս տառապանաց մէջ կը տեսնեմ արդարութեան համար: Ասիկայ որչափ որ պարսք է ընդհանուր մարդկութեան, ևս առաւել ճշմարիտ քրիստոնէութեան: Հրամանքդ ո՞վ ես, և ի՞նչ է ձեր խնդրքն:

— Ո՛հ, ներեցէք ինձ, հայր, ան աստիճանի այլայլած եմ, որ ով բլալս անգամ մոռցայ ձեզ յայտնել: Անունս Իգնատիոս Նօայ է, արուեստիւ ատաղձագործ, և քաղաքիս անմիջապէս մերձակայ գիւղին բնակիչ: Հեղինէ անունով զաւակ մը ունիմ, որ յոյսս էր ապագայ երջանկութեանս, պարծանքս և ամենայն ինչ, ու հիմայ այն կէտին եմ հասեր, որ զաւակս նախատինք է ինձ, զոր այնչափ խնամքով մեծցուցեր և աչացս լուսոյն պէս պահպաներ եմ գիշեր ու ցորեկ: Մայրը վախճանելով ժամանակէն առաջ, ստիպուեցայ գնել զինքը մայրապետաց վանքը, ուր դաստիարակուելով իբրեւ օրիորդ մի ազնուական, գեղովը համակրելի եղաւ և սիրելի ամենուն. բայց ինքը անտարբեր աչքով կը նայէր վրանին: Տարի մը կայ, որ մտերմացաւ Ղուկաս Անիշօր այստեղի հայ վաճառականի մը որդոյն հետ, որն որ խոստմունքներով շփոթելով զասերս անարատ միտքը, մոլորացուց զինքը առաքինութեան

* Ազգային օրիորդին Գլարա Գրիշօ, — որ մատենագրութեամբ կը պարսպէ, — երկասիրութիւնն է ներկայս, ի լեզու հունգարական:

ճամբէն . լաւ գիտէի որ գուտարս սէր ունի երիտասարդին վրայ , բայց թէ մէջերնին եղած սիրոյ կապը պարկեշտութեան սահմանը անցած ըլլայ՝ և ոչ իսկ մտքէս կ'անցնէի :

— Դուկաս Անիւօր . զարմանալով մը ըսաւ ժողովրդապետը . գեռ երէկ առաջին անգամ ծանուցի ժողովրդեանս՝ եկեղեցւոյն մէջ , թէ այդ երիտասարդը կ'ուզէ իրեն օրինաւոր կին առնուլ Մարգարիտա Մաշնաշի օրիորդը :

— Եւ իմ գուտարս առնելով այդ անակնկալ լուրը , յուսահատութեան դուռը հասած , վազեց առ իս՝ ու զիմացս ծունը դնելով պատմեց իւր գըծ , բազդ վիճակը : Աւելորդ կը համարիմ խօսքս երկնցնել , վասն զի ըսածներէս կրնաք հետեցնել հոս զայլուս և աղաչանացս պատճառը :

— Ձեր փափաքը ուրեմն այն է , որ խափսնեմ Դուկաս Անիւօր երիտասարդին ամուսնութիւնը :

— Այո՛ տէր , և ստիպէք զինքը ձեր ազդեցութեամբը , որ պսակուի իմ գոտերս հետ : Ա՛հ , ի՛նչ անպատմելի ուրախութիւն և հանդարտութիւն սրտի պիտի պատճառէք ինձ , եթէ իրօք յաջողցնելու ըլլաք իրաւացի խնդիրքս : Մի նայիք թէ իմ գուտարս ծնունդ է սիգուլական զարմի և միւսը հայ հաւսարակութեան երէցփոխանին ազնիկն է , այլ արգարութիւնը ըլլայ ձեզի ուղղեցոյց , ևս առաւել այսպիսի փափուկ պարագայի և խնդրոյ մէջ : Ձեմ առաւելուս իմ մանաւանդ վստահ եմ որ աղիողորմ խնդիրքս կատարելու չէք զլանար , վասն զի շատերէն լսեր եմ , որ Հայաց ժողովրդապետը Յովհաննէս Դանիէլ , անկողմնասէր և արդարակորով քահանայ է . լսեր եմ և զայն՝ թէ երբ աղքատ Սիգուլացոցմէ վառելու փայտ կամ որ և իցէ բան գնելու ըլլայ , առաւելան կը հասուցանէ անոնց , որովհետեւ վեհանձն է և ողորմասէր աղքատաց նկատմամբ : Ա՛հ , սիրելի և զթած հայր , յոյսս և ակնկալութիւնս դուք էք , և ես վստահ եմ ձեր բարեսրտութեան և անկողմնասէր արդարութեանը վրայ :

— Ապահով եղիք , որ առանց շեղելու արդարութեան ճամբէն , կը ջանամ գոհացնել զձեզ :

Դժբաղդ հայրը ոտք ելլելով՝ համբուրեց ժողովրդապետին ձեռքը , և արտասուալից աչօք տանէն դուրս ելաւ :

Ժողովրդապետը քանի մը վայրկեան մտածելէն յետոյ , նստաւ գրասեղանին զիմաց , և թղթի մը վրայ հետեւեալը գրեց :

« Երիտասարդ բարեկամ , առանց ուշանալու՝ շնորհք ընէիր տունս հրամանել . ամենակարեւոր խնդրոյ համար կ'ուզեմ տեսնուիլ ձեզի հետ :

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԴԱՆԻԷԼ , Ժողովրդապետ » :

Թուղթը ծրարելով՝ յանձնեց պառաւ աղախնոյն , պատուիրելով անոր որ առանց դանդաղելու շուտով տանի զայն երէցփոխանին որդւոյն Դուկաս Անիւօրին :

Աղախինը դուրս ելլելով , ժողովրդապետը քանի մը անգամ վեր վար քա-

լեց սենեակին մէջ, ետքը նստաւ ու ձեռքը ճակտին վրայ գնելով՝ խորունկ մտածութեանց մէջ ընկղմեցաւ :

Քառասնամեայ էր այս միջոցին՝ Յովհաննէս Դանիէլ. հասակաւ բարձր, վայելուչ դէմքով. բարեսիրտ և ազնուական հոգւոյն պատկերը կը փայլէր դէմքին վրայ : Արդարասէր էր և խոնարհ, վեհանձն և անշահատէր, այր ըստ սրտին Աստուծոյ, ճշմարիտ քահանայ. որով սիրելի էր և պատկառելի ոչ միայն իւր ազգայնոց, այլ և Միգուլացոց անգամ, որոնք հետը վերաբերութիւն ունէին : Բերնէն ելած խօսքը՝ պատգամ էր ամենուն :

Մինչդեռ հազարամէկ ամուսնական հանգոյցներու դժուարութիւնը կը տա քննադէին ժողովրդապետին միտք, վրայ հասաւ Ղուկաս Անիշօր՝ վայելուչ մարմնով, բարձրահասակ և մութ իւզագոյն երեսով երիտասարդ. մօտեցաւ ժողովրդապետին և յարգութեամբ բարեւ տալէն ետքը ըսաւ .

— Ահաասիկ եմ, մեծարգոյ ժողովրդապետ :

— Հրամայեցէք նստել, սիրելի բարեկամ, պատասխանեց ժողովրդապետը, և կարևոր հարցմանցս ուշ գնելու :

Երիտասարդը նստելով, կրկնեց քահանան .

— Առանց խորին հետազոտութեան և խնդիրը մեծցնելու, պարզ կերպով կը յայտնեմ ձեզ, որ ձեր ամուսնութեան նկատմամբ զանազան արգելքներ ելան : Այլազունեցաւ երիտասարդը՝ ժողովրդապետին խօսքերուն վրայ :

— Եւ կրնա՞ք գուշակել զանոնք :

— Այո՛, պատասխանեց երիտասարդը, մեղմ ձայնիւ :

— Հեղինէ Նօայ օրիորդին թշուառ հայրը տունս գալով յուսահատութեան մէջ ինկած զանգատեցաւ ընդդէմ ձեր, իբր թէ զուք խոստմունքներով մօլորոցոյած ըլլաք իւր աղջիկը. ճշմարիտ է այս լուրը :

— Այո՛, այնպէս է, պատասխանեց երիտասարդը. երեսին զոյնը կարմրեցելով :

— Եթէ ստոյգ է ձեր վկայութիւնը, ըսէք ինձ ուրեմն, ի սէր Աստուծոյ, ի՞նչ խզմամանքով՝ ուրիշի հետ կ'ուզէիք կապուիլ : Զի մտածեցի՞ք թէ ի՞նչ ծանր մեղանշած կ'ըլլայիք օրիորդ մը խոտմունքներով առաքինութեան պարկեշտ ճամբէն մուրցնելով, և անպատուութեան և թերեւս յուսահատութեան մէջ կը թողուք, տեսնելով ուրիշ աղջկան մը հետ պատկուիլը : Մեղանշած կ'ըլլայիք նաև ընդդէմ մարդկութեան, վատն զի պատուաւոր մարդ մը՝ տուած խոստմանը պարտական է միշտ հաւատարիմ մնալ : Զեր խզմամանքը ցյետին շունչ կենաց տանջած կ'ըլլար զձեզ, երբ մտքերնիդ ընկած ըլլար ձեր պատահաւ. անպատու եղած օրիորդ մը և իւր զթբաղղ հայրը, որուն այնչափ դիշտ պատճառած կ'ըլլայիք : Աստուծոյ օրհնէնքը ժառանգելու տեղ, ցկեանս թշուառ կ'ըլլայիք և արհամարհելի բոլոր մարդկութեան :

Այս խօսքերը այնպիսի ազդու, միանգամայն քաղցր յանդիմանական ձայնով և համոզիչ պատճառաբանութեամբ կ'արտասանէր ժողովրդապետը, որ երիտասարդն երեսին զոյնը նետելով զողով սկսաւ :

— Հիմայ բսէք ինձ , սիրելի բարեկամ , ի՞նչ պատճառի համար անհաւատարմութեամբ , ընդդէմ ձեր տուած խոստմանը , ուրիշի հետ պատկուիլ կ'ուզէք :

— Եւնդացա հնազանդելու , և անոնց կամքը կատարելու համար , որով կը ստիպուիմ ընդդէմ կամացս Մարգարիտա Մալինաշի օրիորդին հետ ամուսնանալ :

— Ձեր ծնողքը գիտէի՞ն , Հեղինէ օրիորդին հետ ձեր վերաբերութիւնը :

— Գիտէին որ յաճախ կը տեսնուէի հետը , բայց թէ....

— Եւ դուք չի համարձակեցա՞ք յայտնել անոնց ձեր գաղտնիքը : Կը ներէք ինձ , սիրելի բարեկամ , ձեր ըրածը արտաքոյ կարգի տկարամտութիւն է . վասն զի այդպիսի զգայուն ու փափուկ պարագայի մէջ , պարզ կերպով ամենայն ինչ պէտք էիք խոստովանիլ ձեր ծնողաց , որոնք անտարակոյս չէին այլ եւս բռնադատեր զձեզ : Բայց գնե՛ք թէ ստիպած ես ըլլային , զոր անկարելի է հաւատալ , դուք ի պարտուց աստուածային պատուիրանաց՝ ազատ էիք , որովհետեւ Աստուած չի պարտաւորեր զմարդ ի հնազանդութիւն՝ ընդդէմ արդարութեան :

Այո խօսքերէն ետքը , ժողովրդապետը երիտասարդին ձեռքը սեղմելով , և զթած աչօք երեսը նայելով անուշութեամբ հարցաց իրեն .

— Կը փափաքէի գիտնալ , սիրելիս , թէ ի՞նչ է հիմայ ձեր կամքը և ուղիղ գիտաւորութիւնը :

Երիտասարդը գլուխը խոնարհած , հառաչանաց ձայն մը հանեց , ու ետքը շտկուելով՝ արիւթեամբ պատասխանեց ժողովրդապետին .

— Կը հետեւիմ , հայր սուրբ , ձեր տուած բարի խորհրդոյն :

— Գեղեցիկ գործ և վեհաձն առաքինութիւն , կրկնեց ժողովրդապետը : Հանգարտ սրտով զարձէք հիմայ ձեր տունը . վաղը կը հանդիպիմ ես ձեր ծնողացը հետ և խօսելով հետերնին ամենայն ինչ կարգի կը գնեմ : Ամենաբարին Աստուած հովանի ըլլայ ձեզի :

Երիտասարդը ժողովրդապետին աջը համբուրելով , հոգին թեթեւցած և խրդեմտանքը հանգարտ՝ տուն դարձաւ :

Շարունակելի

